«Սլացք» ծրագիր - տենդերային մրցույթի պայմաններ

Տենդերային մրցույթ N1/01 հաշվապահության և/կամ ադմինիստրացիոն աշխատանքի ոլորտներում վերապատրաստման ծրագրի մատուցման նպատակով՝ ուղված Արցախցի կանանց

«Սլացք» ծրագիր՝ Արցախի կանանց հզորացման համար

«Սլացք» ծրագիրը նպատակ ունի բարձրացնել Արցախից տեղահանված կանանց զբաղվածության հնարավորությունները՝ տրամադրելով անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ կայուն ապրուստի միջոցներ ապահովելու համար: Ծրագիրը նախատեսված է մինչև 50 արցախցի կանանց համար՝ առաջնահերթություն տալով խոցելի խմբերին: Ծրագրի հիմնական բաղադրիչներն են.

1. **Վերապատրաստում** – Մասնակիցներին տրամադրվում են համապարփակ դասընթացներ և ռեսուրսներ՝ աշխատանքի բարձր պահանջարկ ունեցող ոլորտներում:
2. **Ձեռնարկատիրական աջակցություն** – Մասնակիցներին տրամադրվում է ձեռնարկատիրական հմտությունների ուսուցում՝ աջակցելով նրանց սեփական գործ սկսելու ճանապարհին, ինչպես նաև տրամադրվում է մենթորություն և խորհրդատվություն:
3. **Հոգեբանական աջակցություն և փափուկ հմտությունների զարգացում** – Հոգեկան առողջության և բարեկեցության բարձրացման համար տրամադրվում են փափուկ հմտությունների ուսուցում և հոգեբանական աջակցություն:

«Սլացք» ենթադրամաշնորհային ծրագիրն իրականացվում է «Հաբ Արցախ» ՀԿ կողմից «ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացվում է ՕքսԵՋեն հիմնադրամի, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի, «Նիդեռլանդների հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի կողմից, «Վիննեթ Ծվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

---

1. Նպատակը

Այս մրցույթի նպատակն է ընտրել որակավորված ծառայություն մատուցող կազմակերպություն, որը կանցկացնի դասընթացներ 50 արցախցի կանանց համար՝ հետևյալ ոլորտներից **մեկում կամ երկուսում**.

1. **Հաշվապահություն**
2. **Ադմինիստրացիոն աշխատանք**

Նպատակը մասնակիցներին գործնական հմտություններ տրամադրելն է՝ նրանց զբաղվածության հնարավորությունները բարելավելու և կայուն աշխատանք ունենալու համար:

---

2. Աշխատանքների Ծավալը

Ընտրված կազմակերպությունը պետք է իրականացնի հետևյալ գործողությունները.

1. Ուսումնական ծրագրի մշակում

- Մշակել հատուկ դասընթացային ծրագրեր հետևյալ ուղղություններով.
    - **Հաշվապահություն**՝ հաշվապահության հիմունքներ, ֆինանսական հաշվետվություններ, ծրագրային ապահովման կիրառություն:
    - **Ադմինիստրացիոն աշխատանք**՝ գրասենյակային կառավարում, հաղորդակցման հմտություններ, ժամանակացույցերի կազմակերպում և համակարգչային հիմնական հմտություններ (օրինակ՝ Microsoft Office):
- Ուսումնական ծրագիրը պետք է համապատասխանի մասնակիցների կարիքներին և համատեքստին:

2. Դասընթացի կազմակերպում

- Տրամադրել առնվազն 24 ժամ դասընթաց յուրաքանչյուր ուղղության համար (2025թ.-ի փետրվարի 1-ից ապրիլի 30-ը ժամանակահատվածում):
- Օգտագործել գործնական և ինտերակտիվ ուսուցման մեթոդներ՝ հատուկ չափահաս ուսանողների համար:
- Ներառել իրական կյանքի օրինակներ և դեպքերի ուսումնասիրություններ՝ համահունչ մասնակիցների առօրյա իրականությանը:

3. Աջակցություն մասնակիցներին

- Տրամադրել ուսումնական նյութեր և գործիքներ:
- Ապահովել հետդասընթացային խորհրդատվություն՝ մասնակիցներին ուղղորդելով հմտությունների գործնական կիրառման հարցերում:

4. Հսկողություն և հաշվետվողականություն

- Հետևել դասընթացի ընթացքում մասնակիցների ներկայությանն ու ներգրավվածությանը՝ «Հաբ Արցախի» տրամադրած ցուցակների հիման վրա:
- Ներկայացնել ամփոփիչ հաշվետվություն՝ ամփոփելով դասընթացի արդյունքները, մասնակիցների արձագանքները և առաջարկություններ հետագա ծրագրերի բարելավման համար:

---

3. Համապատասխանության չափանիշներ

Մրցույթին մասնակցելու համար դիմորդները պետք է բավարարեն հետևյալ չափանիշները.

- Հաշվապահության և/կամ ադմինիստրացիոն աշխատանքի ոլորտում ուսումնական ծրագրերի մշակման և անցկացման փորձ:
- Խոցելի խմբերի՝ հատկապես տեղահանված բնակչության կամ կանանց հետ աշխատելու փորձ (նախընտրելի է, բայց պարտադիր չէ):
- Հմուտ և որակավորված մասնագետների առկայություն:
- Հնարավորություն՝ դասընթացն անցկացնել հայերեն լեզվով կամ թարգմանությամբ:
- Գտնվել Երևանում:

---

4. Ժամանակացույց

- **Մրցույթի հայտադիմումների վերջնաժամկետ՝** 2025թ. հունվարի 14
- **Պայմանագրի շնորհման ծանուցում՝** 2025թ. հունվարի 20
- **Ծրագրի իրականացման ժամկետ՝** 2025թ. փետրվարի 1 - ապրիլի 30

---

5. Բյուջե

Դիմորդները պետք է ներկայացնեն ֆինանսական առաջարկ, որը համահունչ է ծրագրի պահանջներին: Հայտում պետք է նշվի մեկ մասնակցի հաշվով ծախսի չափը:

---

6. Գնահատման Չափանիշներ

Առաջարկները կգնահատվեն հետևյալ չափանիշներով.

Տեխնիկական առաջարկ (70%):

- Առաջարկվող ուսումնական մեթոդաբանության և ծրագրի որակը:

- Կազմակերպության և դասընթացավարների փորձառությունն ու որակավորումը:
- Թիրախային խմբի կարիքների և համատեքստի ըմբռնումը:

Ֆինանսական առաջարկ (30%):

- Ծախսարդյունավետություն և համապատասխանություն ծրագրի պահանջներին:

---

7. Ներկայացման Պահանջներ

Հետաքրքրված կազմակերպությունները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- **Տեխնիկական առաջարկ**.
  - Ուսուցման մոտեցում և մեթոդաբանություն:
  - Դասընթացի ծրագրի ուրվագիծ:
  - Դասընթացավարների ինքնակենսագրականներ:
  - Կազմակերպության պրոֆիլ և փորձառություն:
- **Ֆինանսական առաջարկ**.
  - Մանրամասն բյուջե՝ ներառյալ դասընթացավարի վարձատրությունը, նյութերն ու այլ ծախսերը:

Հայտերը պետք է ուղարկվեն էլ. հասցեով **info@hubartsakh.org** մինչև 2025թ.-ի հունվարի 16՝ «Tender N1/01» թեմայով:

---

8. Հետադարձ Կապ

Հարցերի կամ պարզաբանումների համար խնդրում ենք գրել **info@hubartsakh.org** էլ. հասցեին: